

ԻՐԱՎԱԿԱՆ Մշակույթ

Չկա Հասարակություն
անոնց իրավունքի
Ubi societas ibi ius

Երկշաբաթերթ
թիվ 4 (7)
2007 թ. մարտի 30

ԱՆՂՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ



Մարտի 25-ին կյանքի 56-րդ տարում հանկարծամահ եղավ Հայաստանի Հանրապետության վարչապետ, Հայաստանի հանրապետական կուսակցության նախագահ Անդրանիկ Նահապետի Մարգարյանը:

Անդրանիկ Մարգարյանի ողջ կյանքը եղել է անմնացորդ և անկասկածաբար պետականության վերականգնմանն ու կայացմանը:

Ծնվել է 1951թ. հունիսի 12-ին, ուսուցչի ընտանիքում: 1972թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի կիբեռնետիկայի ֆակուլտետը՝ հաշվիչ մեքենաների ինժեների որակավորմամբ:

1972-90թթ.-ին Անդրանիկ Մարգարյանը տարբեր դեպքեր պաշտոններ է զբաղեցրել հաշվիչ մեքենաների բնագավառի մի շարք գիտահետազոտական ինստիտուտներում: Այդուհանդերձ, Անդրանիկ Մարգարյանի կոչումը իր երազած ազատ և հզոր հայրենիքի համար քաղաքական գործունեությունն էր, որով նա սկսել էր զբաղվել դեռևս պատանեկության տարիներից:

1968 թվականից անդամակցել է խորհրդային տարիներին ընդհատակում գործող Ազգային միացյալ կուսակցությանը (ԱՄԿ), որի քաղաքական հենքը Հայաստանի ազատության և անկախության գաղափարն էր ու Հայ դատի պաշտպանությունը: 1973թ. ընտրվել է ԱՄԿ խորհրդի անդամ: Ծավալած քաղաքական գործունեության

համար 1974 թվականին ձերբակալվել է և դատապարտվել Երկու տարվա ազատազրկման: Ազատազրկումից վերադառնալուց հետո Անդրանիկ Մարգարյանը շարունակել է իր ընդհատակյա քաղաքական գործունեությունը՝ որպես Հայաստանի անկախության համար պայքարի առաջամարտիկներից մեկը: Դարաբաղյան շարժման սկզբից ամբողջությամբ նվիրված էր Արցախի ազատագրմանը. գործուն մասնակցություն է ունեցել կամավորական ջոկատների ստեղծմանը, Արցախ գնացի, զինամթերքի, պարենի առաքմանը, մասնակցել է մարտական գործողությունների, միաժամանակ ղեկավարել է Հատուկ ծրագրերի պետական վարչության ինֆորմացիայի բաժինը:

Դեռևս 1992 թվականից Հայաստանի Հանրապետական կուսակցության խորհրդի անդամ Անդրանիկ Մարգարյանը վճռորոշ դերակատարություն է ունեցել ՀՀԿ կայացման գործում:

1993 թվականից ՀՀԿ խորհրդի նախագահն էր, իսկ 1997 թվականից՝ կուսակցության նախագահը:

2000թ. պետության համար չափազանց բարդ իրավիճակում Ա.Ա. Մարգարյանը ստանձնելով ՀՀ կառավարության ղեկավարի՝ վարչապետի պաշտոնը, 7 տարի հավատարմորդ կրեց կայացման շրջանում գտնվող երկրի տնտեսության ղեկավարման ծանր բեռը...

Չարչու ապրանքն է գովում
Մի նոր Գիքոր բարակիկ.
Ցուրտը շորերն է ձևում,
Խեղճ ու մրսած իմ բալիկ...

Ախր ո՞վ է ձեզ տվել
Իրավունքը այդ բռի,
Որ Գիքորը շուկայում
Մանկությունը վաճառի:

Աչքս տեսնում է, սիրտս պահանջում,
«Չկա»-ն խեղճ հոգիս ինչպե՞ս հասկանա.
Այս գոյակովում՝ դաժան, անզիջում,
Ո՞ր մի կարիքին կյանքս դիմանա:

ԱՐՆԱԿ ԲԱՐԱՅԱՆ

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԱՄԸՆԴՅԱՆՈՒՐ ՔԱՐՈՋԱՐՇԱՎՈՐ (GCAP) ՄԵԿՆԱՐԿԵՑ. 2007 ԹՎԻ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԸ՝ ՄԱՐՏԻ 8-ԻՆ

Համընդհանուր տոնվող Կանանց միջազգային օրը՝ մարտի ութին, մեկնարկեց GCAP քարոզարշավի 2007թ. -ի համախմբումը: Այս միջոցառման նպատակն էր՝ ազդեցություն ունենալ տեղական իշխանությունների վրա, հայտնելով, որ կայուն սոցիալական զարգացման հիմնահարցերից մեկը սեռային անհավասարությունն է, քանզի անբավարար է կապը աղքատության և սեռային անհավասարության միջև:

Անցյալ տարի, ավելի քան 100 երկրներից, միայն մեկ օրում 23,5 միլիոն մարդ մասնակցեց «Ելիր ընդդեմ աղքատության» քարոզարշավին:

Այս տարի ազգային կուսիցիաները դարձյալ կմիավորվեն սպիտակ ժապավենի ներքո, ի ցույց դնելով իրենց օժանդակությունը և համախմբվածությամբ՝ անհավասարության և աղքատության վերացման համար մղվող ամենօրյա ու հետևողական ընդհանուր պայքարում:

Շարունակ աճող ազգային կուսիցիաների օժանդակությամբ մի շարք մասսայական միջոցառումներ կկազմակերպվեն՝ հապացույց աղքատությունը կրճատելու ժողովրդի կամքի ու վճռականության:

Մայիսի 12-ին կայանալիք՝ Աժ-ի ընտրությունների առիթով «Ընտրությունը թուն է» ՀԿ-ն իրավիճակ էր կլոր սեղան-քննարկում: Ներկա էին պատգամավորության թեկնածուներ, քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ, ՀԿ անդամներ, անկախ դիտորդներ:

Կլոր սեղանի նպատակն էր՝ քննարկել ընտրական օժանդակները հարցեր, մասնավորապես հասկանալ, թե լոռեցիներն ինչ դիրքորոշում ունեն անպատասխանատու պատգամավորների նկատմամբ: Վերջապես, ե՞տ կանչել նրանց, թե՞ զրկել անձեռնմխելիության իրավունքից: ՀԿ-ներ ներկայացնող անդամները պահանջեցին որոշակի պատժամիջոց սահմանել նիստերին չմասնակցող պատգամավորների նկատմամբ. թեկուզ զրկել աշխատավարձից: «Ընտրությունը թուն է» ՀԿ նախագահ Հարություն Համբարձումյանը պարզաբանեց, որ Ընտրական Օրենսգրքի 17.1 հոդվածը պատժամիջոց, իհարկե, սահմանում է, ուղղակի

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴՈՒՍ

մեր մեջ անպատժելիության գործոնն այնքան խոր է, որ շրջանցվում է նաև սույն օրերը: Հարցի շուրջ իր կարծիքն արտահայտեց նաև թիվ 31 ընտրատարածքում ՕԵԿ-ի կողմից պատգամավորության թեկնածու առաջադրված Վիկտորյա Հարությունյանը, մասնավորապես նշելով, որ շատերը Աժ են մղում ոչ թե օրենսդրական նախաձեռնություններն ու ծրագրերը իրագործելու նպատակով, այլ «տանիք» ունենալու համար: Անձեռնմխելիության իրավունքի վերացման դեպքում, հավանաբար, շատերն անմիջապես կիրառվեին պատգամավոր դառնալու մտքից:

Ներկաները հարցեր ուղղեցին ընտրատարածքների ոչ ճիշտ ձևավորման, պատգամավորների թվաքանակի, կուսակցությունների մեծաքանակության վերաբերյալ: Հարց ու պատասխանի միջոցով նրանք համաձայնության եկան, որ 131 պատգամավորն այնքան էլ շատ չէ,

ծանոթանալ ինտերնետային կայքով, ուր գտնվում են պատգամավորների ելույթների տեղագրությունները:

Կլոր սեղանի վերջում Հարություն Համբարձումյանն արձանագրեց, որ լոռեցիները չեն ցանկանում պատգամավորին ուղղակիորեն պատասխանատվության ենթարկել կամ զրկել անձեռնմխելիությունից, այլ ընդամենը պահանջում են, որ պատգամավորներն ընտրվելուց հետո չմեկուսանան ժողովրդից, զոնե եռամսյակը մեկ անգամ հանդես գան հաշվետվությամբ՝ սկսած գործունեության 100-րդ օրից:

Նման կլոր սեղաններ արդեն իրավիճակ են Սյունիքի և Վայոց ձորի մարզերում: Հանրապետության մյուս մարզերում կայանալիք հանդիպումներից հետո, կարծիքներն ու առաջարկներն ի մի բերելով, կազմակերպությունը մի ամփոփ փաթեթ կներկայացնի Աժ-ին՝ ակնկալելով «Ընտրական օրենսգրքի» նոր բարեփոխումներ:

ՆԵՒՆԻ ԴԱՎԹՅԱՆ
Մեր թղթակից

Բաց Գամակ (Կիսաերգիտանք)

Սպասարկման ոլորտի համարյա բոլոր կազմակերպությունների

ՕՐՈՒՄԵՑ ԶՐԻՆ՝ ՇՈՒՐԶՕՐԵՑՎ ՎՃԱՐ կամ ՅԱՄԱՔ ԱՌՈՒ՝ «ԶՐԱԼԻ» ՊԱՐՏՔԵՐ...

Ոչ վաղ անցյալում, եթե մեկը մյուսի լավն էր կա- մենում, նման մարթանք էր տալիս...

տումներ (վերջնագրեր) ենք ստանում... - Ջուրը կկտրենք, գազը կկտրենք, լույսը կկտրենք, հույսը կկտրենք...

Սպառողի իրավունք

Այսպիսով՝ շարքային սպառողն ու հասարակ քաղաքացին մնում են անպաշտպան:

Չգիտենք, վերոհիշյալ հիմնարկներում ի հայտ եկած «թերացումների մեղքը» համակարգչային բազային է, թե՛ չհամակարգված բազային վի- ճակից...

Համակարգչային անկարգություն

Հ ա մ ա - կ ա ր գ ի չ, համա թե՛ կարգիչ ու կար- գավորիչ է հա՛, միշտ ի վնաս մեզ է կարգավորում, կասեին նոր տեխնիկայի խեղճից ու շառից հեռու ապրած մեր պապերը...

Հ.Գ. Այս վիճակն, անշուշտ, Լուսահոգի Թուճապանի «Հառաչանք»-ում էլ կա.

Կենցաղային հարգանքներով՝ ԶՐԱԾ ՍԱՐՈՒՔՅԱԼ

ՍԱՄՎԵԼ ԽԱԼԱԹՅԱՆ

Ե Չ Ի Ա Կ Ա Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ես էլ եմ: Ուրիշները թաքցնում են իրենց իշխողները, բայց ես թաքցնելու բան չունեմ: Ես ազնիվ էլ եմ:

Ինձ նման ավանակների դուք շատ եք տեսել, բայց ձեր մտքով չի էլ անցնում, որ բեռնի տակ կքված այդ ավանակը գուցե մտածում է էյնշտեյնի տեսության, Սախարովի կամ Բիսմարկի գործերի մասին...

Այ, այժմ տրվել է ազատ զոռալու իրավունք: Երբ քեֆս կտրի, ձգում են վիզս ու կուշտ զոռում են: Կուշտ զոռում են, բայց... չեն կշտանում: Բեռն էլ չթեթևացավ: Նու՛յն էշու- թյունն է: Բայց արի ու տես, որ այդ մասին զոռալ չի կարելի: Սոված կարող ես զոռալ, իսկ սոված լինելու մասին զոռալ՝ չի կարելի: Ինձ էլ-խելքով, այսպես որ շարունակվի, շուտով զոռալու ուժ էլ չի մնա: Բայց մի գուլիս նույնն են ասում՝ «Էշ, մի սատկի, գարուն կգա...» Զեմ հասկանում, սա կո՞չ է, թե՛ ժողովրդավարության պայմաններում հռչակված նոր օրենք... Երևի օրենք է, որ էշերս սրբությամբ կատարում ենք, ձգտում ենք չսատկել՝ մինչև գարուն....

Քեզ սպասող չմնաց, Ու՛ր ես գալիս, ա՛յ գարուն... Գովքդ անող չմնաց.

Ջուր ես գալիս, ա՛յ գարուն... Է՛, Է՛, Է՛... Ժանոթ-հարազատներիցս մի մասն էլ թողեց-գնաց փար- թան արոտավայրեր: Կգա ժամանակ՝ ինձ պես էշերին մա- տով ցույց կտան, կասեն՝ ահա ձեզ այն էշը, որ իշավարի ապրեց ու էլ էլ մնաց... Ոչինչ, ասելը թող ասեն, բարձելը՝ թող բարձեն, բայց կատարում են, որ էշի տեղ էս դնում ու ասում, թե՛ պայծառ ապագայի մասին զոռա...

Իսկ ես հոգնել եմ ապագայի մասին զոռալուց: Ինձ ներ- կան է մտահոգում, մեր ներկան, որ այնքա՛ն նման է մոռացված, տխուր անցյալի...

Աղյուսակ 2

Հարցումների ճիշտ պատասխանների արդյունքների վերլուծություն

Table with 5 columns: Բնակավայր, Տեսական հարցեր, Գործնական կիրառման հարցեր, Տեսական հարցեր, Գործնական կիրառման հարցեր. Rows include Ախրալա, Ընդ. %, Լեջան, Կահազնի, Մարգահովիտ, Ավալերդի, Դսեղ, Տաշիր, Ընդամենը.

Նախնական և ամփոփիչ հարցումների համե- մատության հիման վրա կարելի է եզրակացնել, որ սեմինարներն արդյունավետության առումով եղել են դրական. մասնավորապես՝ առաջին մասի (տեսական) հարցերի վերաբերյալ մասնակիցների միջին իրազեկվածությունը 32,79 տոկոսից դարձել է 64,69 տոկոս, իսկ երկրորդ մասի (գործնական կիրառում) հարցերի վերաբերյալ մասնակիցների միջին իրազեկվածությունը 41,28 տոկոսից դարձել է 57,83 տոկոս:

Ներկայացվածը հանրագումարի բերելով, կարելի է նշել, որ սեմինարների մասնակիցների գիտելիքները զգալիորեն աճել են տեսական բեմաների վերաբերյալ՝ շուրջ 2 անգամ, և շուրջ 1,5 անգամ՝ գործնական բեմաների վերաբերյալ (աղյուսակ 3):

Ճիշտ պատասխանների մեջ նախնական հարցման ամփոփման արդյունքում գործնական կիրառման հարցերին տրված պատասխանների տեսակարար քանակը/տոկոսը զգալի բարձր է տեսական հարցերի պատասխանների արդ- յունքից: Սա, իհարկե, չի նշանակում, որ գործնական կիրառման հարցերի վերաբերյալ մասնակիցներն ունեին շատ ավելի բարձր գիտելիքներ, քան տեսական մասի վերաբերյալ: Պատճառն այն է, որ հարցաշարի միայն 3

հարցերն էին վերաբերվում տեսական մասին և 9-ը՝ երկրորդ մասին: Այս առումով առավել օբ- յեկտիվ պատկերը տրված է երկրորդ արյու- սակում:

Այդուհանդերձ, արյուսակում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ մասնակիցների մոտ հարցաշարի երկու մասերի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը բարձրացել է առավելապես տեսական մասով, քան՝ գործնա- կան կիրառման: Դա ակնհայտ երևում է հատկա- պես Վահագնի և Տաշիր համայնքների օրինա- կում:

Հարցաշարի առաջին մասի հարցերի վերա- քերյալ իրազեկվածության մակարդակի բարձ- րացման «պատճառ» (շուրջ 1,7 անգամ, 142 «ճիշտ» պատասխանը դարձել է 238) կարող է լինել դրանց վերաբերյալ բեմաների մատուց- ման ձևը. «Իրավունքի» և «Մարդու իրավունք- ների» հասկացությունները, «Դատարանների անկախության» վերաբերյալ բեմաները մա- տուցվել են Ուսուցման կազմակերպման համա- գործակցային եղանակի (ՈւՎԳԵ) Տակտային մեթոդով: ՈւՎԳԵ-ի արդյունավետությունը բազ- միցս ապացուցվել է Մարդու իրավունքների հայկական դպրոցի իրականացրած կրթական- ուսուցողական ծրագրերի և դասընթացների արդյունքում:

Աղյուսակ 3

Միջառարկայային իրազեկվածության մակարդակի փոփոխությունը հարցաշարի վերջին քննարկում

Table with 7 columns: Բն. ու. ու. յ., Մասնակցի անուն, Ցուցանիշներ, Պատասխան, Ցուցանիշներ, Ցուցանիշներ, Ցուցանիշներ. Rows include Ախրալա, Ընդ. %, Լեջան, Կահազնի, Մարգահովիտ, Ավալերդի, Դսեղ, Տաշիր, Ընդամենը.

Հարցաշարի երկրորդ մասի հարցերի վերա- քերյալ մասնակիցների իրազեկվածության մակարդակի բարձրացումն արտահայտվում է ավելի համեմատ թվերով՝ շուրջ 1,2 անգամ, 854 «ճիշտ» պատասխանը դարձել է 995: Այս հատվածը մատուցվել է 2 փոքր խմբային մակարդակի բարձրացումն արտահայտվում է աշխատանքների, հարց ու պատասխանների, քննարկումների միջոցով (աղյուսակ 4):

Table with 4 columns: #, մասնագիտություն/զբաղմունք, մարդ, %. Rows include ուսուցիչ, ուսանող, համայնքապետ, տեղակալ, ավագանու անդամ, դպրոցի տնօրեն/փոխտնօրեն, ԳԿ անդամ, լրագրող, համայնքային կազմակերպության / հիմնարկի աշխատակից*.

* Թաղապետ, համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար, գանձա- պահ, իրավաբան, հարկահավաք, մանկապարտեզի տնօրեն, դաստիարակ, մշակույթի տան տնօրեն, գրադարանավար, հաշվապահ, մարզադպրոցի տնօրեն, ֆինբաժմի վարիչ, արխիվի տնօրեն, մեթոդիստ:

Ամփոփելով այս ամենը, պարզ է պատկերավոր պետք է նշենք. եթե մինչ սեմինարին մաս- նակցելը համայնքային առաջնորդի աշխատան- քի արդյունավետությունը կազմում էր 37,05 տոկոս, կամ համայնքի յուրաքանչյուր 3 շահա- ռուից միայն մեկին էր պատշաճ ծառայություն մատուցում, ապա սեմինարին մասնակցելուց

հետո նրա աշխատանքի արդյունավետությունը դարձավ 61,26 տոկոս, կամ համայնքի յուրա- քանչյուր 3 շահառուից երկուսին է այլևս պատ- շաճ ծառայություն մատուցում:

ԱՐԱՅԻԿ ՊԱՊԻԿՅԱԼ ՀՍԻԿ-ի կրթության բաժնի վարիչ



ՍԱՐԴՈՒՆ ՈՐԴՈՒՆ ԳԱԼՈՒՍԵԸ

«Այդ օրերի նեղությունից կարճ ժամանակ հետո, արեգակը պիտի խավարի, և լուսինը իր լույսը չպիտի տա, և աստղերը երկնքից պիտի ընկնեն, ու երկնքի գործություններ պիտի շարժվեն: Եվ ապա երկնքի վրա մարդու Որդու նշանը պիտի երևա, ու այդ ժամանակ երկրի բոլոր ազգերը լացուկոծ պիտի անեն և

պիտի տեսնեն մարդու Որդուն՝ եկած երկնքի ամպերի վրայով՝ զորութեամբ և բազում փառքով: Եվ նա պիտի ուղարկի իր հրեշտակներին մեծ շեփորով, ու պիտի հավաքեն նրա ընտրյալներին չորս կողմերից՝ երկրնքի ծագերից մինչև մյուս ծագերը»:

(Մատթ. 24:29-31)

ՄԵԾ ՊԱՅՔԻ ԿԻՐԱԿԻՆԵՐԻ ՈՍԿԵ ԾՂԹԱՆ

ՄԱՐՏԻ 18
Դատավորի կիրակի

ՄԱՐՏԻ 25
Գալստյան կիրակի

ԱՆԻՐԱՎ ԴԱՏԱՎՈՐԻ ԵՎ ԱՅՐԻ ԿՆՈՋ ԱՌԱԿԸ

Մի առակ էլ ասաց նրանց այն մասին, թե նրանք ամեն ժամ պետք է աղոթեն ու չձանձրանան: Ասաց. «Մի քաղաքում մի դատավոր կար. Աստուծոց չէր վախենում և մարդկանցից չէր ամաչում: Եվ նույն քաղաքում մի այրի կար, որ գալիս էր նրա մոտ և ասում իմ ոսոխի դեմ իմ դատը տես: Եվ (դատավորը) երկար ժամանակ չէր ուզում. դրանից հետո իր մտքում ասաց՝ թեև Աստուծոց չեմ վախենում և մարդկանցից չեմ ամաչում, բայց այն բանի համար, որ այրի կինը

ինձ հոգնեցնում է, նրա դատը տեսնեմ, որպեսզի անընդհատ չգա և ինձ չձանձրացնի»: Եվ Տերն ասաց. «Լսեցե՛ք, թե ինչ էր ասում անիրավ դատավորը: Իսկ Աստված արդարություն չի՞ անի իր այն ծառաներին, որոնք զիջեր և ցերեկ աղաղակում են նրան, և նրանց հանդեպ միթե համբերատա՞ր միայն կլինի: Այո, ասում եմ ձեզ, նրանց իսկույն արդարություն կանի. իսկ երբ մարդու Որդին գա, արդյոք երկրի վրա հավատ կգտնի՞»:

(Ղուկ. 18:1-8)

ԶՄՊԱՍՎԱԾ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ

«Բայց այդ օրվա և ժամվա մասին ոչ ոք չգիտե. ոչ երկնքի հրեշտակները և ոչ էլ Որդին, այլ միայն Հայրը: Եվ ինչպես Նոյի օրերն էին, այնպես պիտի լինի մարդու Որդու գալուստը. որովհետև ինչպես որ ջրհեղեղից առաջ եղած օրերն էին, երբ ուտում էին և խմում, կին էին առնում ու մարդու էին գնում, մինչև այն օրը, երբ Նոյը տապան մտավ, ու նրանք չգիտեին, մինչև որ ջրհեղեղը եկավ ու վերցրեց տարավ բոլորին, այնպես պիտի լինի մարդու Որդու գալուստն էլ: Այն

ժամանակ, եթե ազարակի մեջ երկու (հոգի) լինեն, մեկը պիտի վերցվի, և մյուսը պիտի թողնվի: Եվ եթե երկու (հոգի) աղան մի երկանքի վրա, մեկը պիտի վերցվի և մյուսը պիտի թողնվի: Արթուն կացե՛ք, որովհետև չգիտեք, թե ո՞ր ժամին կգա ձեր Տերը: Այս իմացե՛ք. եթե տանուտերը զիտենար, թե ո՞ր ժամին գող կգա, կհսկեր և չէր թողնի, որ իր տունը ծակեն: Դրա համար դուք էլ պատրաստ եղե՛ք, որովհետև այն ժամին, երբ չեք սպասում, մարդու Որդին կգա»:

(Մատթ. 24:36-44)

«ՔՐԻՍՏՈՍՆ ԱՄԵՆԱԿԱՐՈՂՆ Է, ԱՄԵՆԱԶՈՐ»

(ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ «Գարեգին Նժդեհը և Քրիստոնեությունը» գրքից)

Կրոնի նկատմամբ ամեն վերաբերմունք կարելի է պարզել նրա հիմնադրի մասին ասված խոսքերից: Նժդեհը Քրիստոսին ընդունում է որպես **ամենազոր Աստվածամարդ**: «Սիրում է նա, ասում է Նժդեհը, ո՛վ ուժեղ է, ո՛վ հոգու առատություն ունի, ում ուժի բաժակը լցված է հորդելու աստիճան: Քրիստոսը սիրում էր, որովհետև ուժեղ էր... **Նա ամենակարողն էր, ամենազոր**, մենք առնվազն կարող և հզոր պիտի լինենք, որպեսզի կարողանանք սիրել և զոհաբերել» (շեշտավորումը՝ Ա. Պ.-ի): Կրոնաբարոյական զույգ առաքինությունները՝ սերը և զոհաբերությունը, Նժդեհը կապում է ուժականության հետ՝ հիմնվելով հոգեբնախոսական այն պարզ ճշմարտության վրա, ըստ որի սերն ու զոհաբերությունը, նույնիսկ իրենց նախնական դրսևորումներով, պահանջում են ուժի, եռանդի արտահոսք, կորով, կենսատու վերաբերմունք, հոգու ջերմություն:

Նժդեհի մտքի համակարգում ակնառու է բարոյախոսական գնահատումների և հոգեբանական ճշմարտությունների կապը, մարդկության հոգևոր կենսափորձի նրա խորագիտությունը: Եթե Քրիստոսը ամենազոր է և ամենակարող, ուրեմն, դժվար չէ կռահել, որ նրա սիրելու կարողությունն անհամեմատելի է, այսինքն՝ բացարձակ է, և իր արտահայտ կերպավորմամբ՝ կատարյալ հարացուցական, իդեալական օրինակ՝ համայն քրիստոնյաների համար: Նժդեհը ոչ միայն ընդունում է Քրիստոսին որպես Աստծո, որպես Փրկչի, Ուսուցչի և Առաջնորդի, այլև յուրահատուկ կերպով մեկնաբանում նրա մեծությունը. «Նազովրեցու մեծությունը նրա մեջ չէ, որ մի քանի փաստեր թողեց, այլ որ զգայապաշտ մարդկության նոր իդեալներ տվավ և մի այլ աշխարհի կարոտով հոգիները վառեց...»: Պատահական չէ, որ Նժդեհն իսկական քրիստոնյա է համարում նրան. «ուն մեջ մի քիչ քրիստոնություն

կա, մի կայծ՝ ամենազոր Աստվածամարդու հոգուց... Քրիստոնյան նա չէ, որ քրիստոնեական վարդապետության տարերքը սխալ է հասկացել, ընկել նախապաշարունների ցանցի մեջ և տկարացել կորչելու



աստիճան»: Եվ միաժամանակ Հայ Եկեղեցուց վերաբերյալ Նժդեհն արտահայտում է այսպիսի միտք. «Եկեղեցին չարաչար սխալվել է «տմանկ» ների և «սմանկ»ների բարոյականություն քարոզելու և ամբողջ դարեր պատճառ դարձել մեր ժողովրդի անօրինակ ողբերգության: Սրանից հետո սիրո և զոհաբերության ընդունակ արի ժողովրդի մասին պիտի խոսի, եթե ուզում է, որ Քրիստոնեության հետքերը մնան փոքր Ասիայում և Հայաստանում»:

Սրանք բանալի մտքեր են, որոնք ի հայտ են բերում Նժդեհի վերաբերմունքը Քրիստոսին, քրիստոնեությանը և մասամբ՝ Հայ Եկեղեցուն: Մասամբ, որովհետև այդ մեկ հատիկ միտքը տվյալ պարագային չի սպառում Նժդեհի վերաբերմունքը Հայ Եկեղեցուն, մասնավոր՝ Եկեղեցու վերաբերյալ նրա քննադատությունը հիմք չի տալիս եզրակացնելու, որ նա իրեն Հայ Եկեղեցուց դուրս է համարել: Հետագա շարադրանքից պարզ կդառնա Հայ Եկեղեցու վերաբերյալ Նժդեհի մտքերի ուղղվածությունն ու նպատակը:

Վերոգրյալը, սակայն, միանգամայն բավարար է հստակ պատկերացում կազմելու Քրիստոսի և Քրիստոնեության վերաբերյալ Նժդեհի հայացքների բուն էության մասին, որովհետև Նժդեհն այն անհատականությունն է, ում **աշխարհայացքը միանգամայն անհակասական է** և նրա բուն իրադարձություններով ու փորձություններով լի **կյանքում գրեթե փոփոխություններ չի կրել**: Նրա անդրամիկ ստեղծագործությունները և կյանքի վերջում գրած երկերն այս առումով իրարից գրեթե չեն տարբերվում: Մարգարեական խորաթափանցության և զորավոր կամքի տեր ազգային գործիչն ու մտավորականը թեև քաջիմաց էր համաշխարհային մշակույթի հիմնական համակարգերին, սակայն, նրա միտքն ու խոսքը ծնունդ են առել իր սրտի խորքերից՝ հիմնական մղիչ ունենալով աստվածային ներշնչանքը, որն իր բանական կերպավորումն էր առնում ազգային մշակույթի և քրիստոնեական բարեկրթության հենքի վրա: **Նժդեհն իր բնույթով կրոնական ոգեշնչումի և խանդավառության անհատականություն է**: Նրա՝ մեզ հայտնի ստեղծագործությանց մեջ Քրիստոսի և Իր վարդապետության վերաբերյալ բացասական որևէ արտահայտություն ց՛արդ մեզ չի հանդիպել...

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

Մարդու իրավունքների հայկական դպրոցը (ՄԻԴԴ) 2007 թ. հունիսի 18-19-ին Վանաձորում կազմակերպում է փորձի փոխանակման ամենամյա երրորդ սեմինար-համաժողովը ԻՐԱՎՈՒՆՔ («Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Պետություն և իրավունք») առարկայաշարի մասնագետների / ուսուցիչների համար:

Համաժողովի նպատակն է՝
Հանրապետության տարբեր մարզերի «Իրավունք» առարկայաշարի ուսուցիչների և կրթության մասնագետների փորձի և հմտությունների փոխանակումը և համագործակցության զարգացումը:
Համաժողովին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև 2007 թ. ապրիլի 9-ը գրանցվել (լրացնել հայտաբերիչի) և մինչև 2007 թ. ապրիլի 27-ը ներկայացնել հայտի /զեկուցի ամփոփագիր (ամփոփագրի ձևը դիմորդներին կտրվի գրանցվելուց հետո):

Մասնակիցների ընտրությունը կկատարվի մրցույթային կարգով: Ընտրված մասնակիցները կտեղեկացվեն 2007 թ. մայիսի 4-ին: Մինչև 2007 թ. մայիսի 25-ը նրանք պետք է ՀՍԻԿ Կրթության բաժնի հանձնեն իրենց զեկուցի (առաջարկվող թեմաների ցուցակը ներկայացված է ստորև) ամբողջական, ավարտուն տարբերակները: Այդ աշխատանքներից ակնկալվում է հաջողված փորձի, հետաքրքիր և արդյունավետ նորոյթների ու առաջարկների ներկայացում: Խրախուսվում է նոր, համագործակցային մեթոդների վերաբերյալ փորձի, արդյունքների, առաջարկների ներկայացումը:
Համաժողովի մասնակիցները հնարավորություն կունենան ներկայացնել ֆիլմեր, սլայդներ, պլակատներ, աշակերտական աշխատանքներ:

Փորձագիտական դրական գրախուսված աշխատանքները կտպագրվեն համաժողովի ժողովածու-գրքույկում:

- Առաջարկվող թեմաներ**
1. Դասավորության արդյունավետ կառավարում,
 2. Ուսուցման կազմակերպման համագործակցային եղանակ,
 3. Իրավական դաստիարակություն,
 4. Տեսանյութերի ցուցադրում (կուրսը կենտրոնացնում է հեղինակների մեկնաբանություններով),
 5. Գործնական խաղերի կազմակերպում:

ՀՍԻԿ-ի համաձայնությամբ՝ դիմորդը

կարող է ներկայացնել աշխատանք հարակից այլ թեմայով:

Մասնակցելու համար կարող են դիմել

1. Հանրակրթական դպրոցների այն ուսուցիչները, ովքեր
* ավարտել են ՄԻԴԴ-ի դասընթացի լրիվ ծրագիրը և ստացել ավարտական վկայական,
* սովորում են ՄԻԴԴ-ում,
* դասավանդում են «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Պետություն և իրավունք» ուսումնական առարկաները:
2. «Իրավունք» ուսումնական բնագավառի ուսուցանողներ (թրեյներներ):
3. Կրթության և կրթության մեթոդաբանության մասնագետներ:

ՀՍԻԿ-ը հոգում է հետևյալ ծախսերը

1. Բնակավայր-Վանաձոր, Վանաձոր-բնակավայր ուղեվարձերը (վճարման համար հիմք են հանդիսանում ուղեկտրոնները),
2. Սնունդ և հյուրանոց՝ համաժողովի ընթացքում,
3. Ձեկուցի (ժողովածու) իրատարակում:

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը

- Հայտաբերիչի (գրանցման համար),
 - Ինքնակենսագրություն (CV),
 - Անձնագրի պատճեն:
- Փաստաթղթերը պետք է ներկայացնել ոչ ուշ, քան մինչև 2007 թ. ապրիլի 9-ը, հետևյալ հասցեով՝
Հայաստանի Հանրապետություն, ք. Վանաձոր, Շիրակացու I նրբանցք, թիվ 2 Դեռախոս՝ (322) 22967, 44781
Ֆաքս՝ (322) 44781

Փաստաթղթերից որևէ մեկի բացակայության դեպքում դիմումը չի քննարկվում:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Կրթության բաժնի վարիչ Արայիկ Պապիկյանին՝ apapikyan@acrpc.am



Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի Մարդու իրավունքների հայկական դպրոցը ԵՅ օժանդակությամբ հայտարարում է ընդունելություն հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման 2007-2008թթ. մեկամյա դասընթացի համար: Դասընթացը կազմակերպվում է ՀՀ ԿԳ նախարարության Կրթության ազգային ինստիտուտի համագործակցությամբ:

Դասընթացի նպատակը «Իրավունք» առարկայաշարի («Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Պետություն և իրավունք») ուսուցիչների մասնագիտական որակավորման բարձրացումն է՝ տեսական գիտելիքների և մեթոդական հմտությունների բարելավման միջոցով:
Ուսման ընթացքում սովորողներն ապահովվում են անհրաժեշտ գրականությամբ, օգտվում ՀՍԻԿ Մարդու իրավունքների գրադարանային ցանցի ծառայություններից:
Դպրոցը հաջողությամբ ավարտելու դեպքում սովորողն ստանում է «Իրավունք» առարկայաշարի մասնագետի որակավորման վկայական:
Ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով:

Դիմել կարող են

Հանրակրթական դպրոցի այն ուսուցիչները, ովքեր
* դասավանդում են «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Պետություն և իրավունք» ուսումնական առարկաները,
* սկսած 2007-2008թթ. ուս. տարվանից՝ առնվազն 2 տարի պետք է դասավանդեն «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Պետություն և իրավունք» ուսումնական առարկաները:

ՀՍԻԿ-ը հոգում է հետևյալ ծախսերը.

1. Բնակավայր-Վանաձոր (ՀՍԻԿ-ի գրասենյակ), Վանաձոր-բնակավայր ուղեվարձերը (վճարման համար հիմք են հանդիսանում ուղեկտրոնները),
2. Սնունդ,
3. Կացարան:

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում-հարցաթերթիկ.
- Ուսումնական հաստատության ղեկավարի կողմից լրացված հարցաթերթիկ-երաշխավորագիր,
- Ինքնակենսագրություն (CV),
- ԲՈՒՀ-ի դիպլոմի պատճեն,
- Հարակից այլ դասընթացների (սեմինարների) վկայականների պատճեններ (եթե կան),
- Անձնագրի պատճեն,
- 3/4 չափի մեկ լուսանկար (\$աքսով և էլ.փոստով ուղարկված լուսանկարներ չեն ընդունվում):

Փաստաթղթերից որևէ մեկի բացակայության դեպքում դիմումը չի քննարկվում:
Դիմում-հարցաթերթիկի և հարցաթերթիկ-երաշխավորագրի ձևերին կարելի է ծանոթանալ՝ այցելելով www.acrpc.am ինտերնետային էջ:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել ոչ ուշ, քան մինչև 2007 թ. մայիսի 4-ը, հետևյալ հասցեով՝

Հայաստանի Հանրապետություն, ք. Վանաձոր, Շիրակացու I նրբանցք, թիվ 2 Դեռախոս՝ (322) 22967, 44781
Ֆաքս՝ (322) 44781
Էլ.փոստ՝ acrpc@acrpc.am, apapikyan@acrpc.am

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Կրթության բաժնի վարիչ Արայիկ Պապիկյանին՝ apapikyan@acrpc.am

Հ Ա Ն ՈՒ Ն Հ Ա Ն Ր Օ Գ ՈՒ Տ Հ Ա Մ Ա Գ ՈՐ Ծ Ա Կ Ց ՈՒ Թ Յ Ա Ն



ՈՒ Շ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒՆ

Հարգելի բարեկամներ, տեղեկացնում ենք Ձեզ, որ «Իրավական մշակույթ» երկշաբաթաթերթը այսուհետ հնարավորության սահմաններում պատրաստ է անվճար տպագրել հասարակական կազմակերպությունների, կրթական և առողջապահական հիմնարկների, մշակութային օջախների, այլ պետական և ոչ պետական հաստատությունների, ինչպես նաև քաղաքացիական միջամեթոդությունների ապաքաղաքական և շահույթ չհետապնդող Ձեր հայտարարությունները:

Անվճար իրավաբանական խորհրդատվություն

Հարգելի ընթերցող,
«Սահմանադրական օրինականության ամրապնդում մարդու իրավունքների պաշտպանության միջոցով» ծրագրի շրջանակներում ՀՍԻԿ-ը իրականացնում է **անվճար իրավաբանական խորհրդատվություն**:
Ձեզ հուզող հարցերով դուք կարող եք դիմել՝ այցելելով ՀՍԻԿ գրասենյակ, կամ դիմումներն առաքել նամակով, ֆաքսով, ինչպես նաև էլեկտրոնային փոստով՝ apapikyan@acrpc.am:
Դիմումների վերաբերյալ կտրվեն գրավոր կամ բանավոր խորհրդատվություններ, իսկ հասարակական հնչեղություն ունեցող հարցերի վերաբերյալ համապատասխան նյութեր կտպագրվեն նաև «Իրավական մշակույթ» երկշաբաթաթերթում:
Ծրագիրն իրականացվում է Թաունթերֆարթ ինթերնեյշլ (CPI/CASP-ի, ԱՄՆ ԱԶԳ-ի և ԴԿԾՄԿ) կազմակերպության աջակցությամբ:

Գրասենյակում խորհրդատվություններ մատուցվում են յուրաքանչյուր երեքշաբթի և հինգշաբթի օրերին՝ ժամը 11.30-ից 13.00: Այլ բնակավայրերից և մարզերից ժամանած քաղաքացիներին խորհրդատվություն մատուցվում է բոլոր աշխատանքային օրերին՝ երկուշաբթի-ուրբաթ, ժամը 9.30-ից 17.30:

Սեր հասցեն է՝
ք. Վանաձոր, 2002, Շիրակացու I նրբանցք, թիվ 2, հեռ.՝ 0322 2-29-67, ֆաքս՝ 0322 4-47-81, էլ. փոստ՝ acrpc@acrpc.am, lc@acrpc.am, apapikyan@acrpc.am

Թերթը իրատարակվում է Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ: Երկշաբաթաթերթի բովանդակության համար պատասխանատվությունը կրում է միայն Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը: Թերթը ոչ մի դեպքում չի կարող դիտվել որպես Եվրոպական միության դիրքորոշումն արտացոլող փաստաթուղթ:

Հրատարակության 9 տարի
Հիմնադիր և իրատարակիչ՝
Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն
ՀՀ, 2002 թ. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2
Հեռ.՝ (+374 322) 2-29-67
Ֆաքս՝ (+374 322) 4-47-81
Էլ. փոստ՝ lc@acrpc.am Համացանցի էջ՝
www.acrpc.am

Գլխավոր խմբագիր՝ Զրաջա ՍԱՐԴԻԱՆ
Խմբագիր՝ Ալեկ ՍԱՐԴԻԱՆ
Համակարգչային ձևավորող՝ Նարինե ԱԶՐՅԱՆ
Թղթակցությունները չեն գրախուսվում և հեղինակներին չեն վերադարձվում:
Մեջբերումներ անելիս կամ արտատպելիս հղումը «Իրավական մշակույթ» պարտադիր է:
Հրատարակումների բովանդակությունը կարող է չհամապատասխանել խմբագրության կարծիքին:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Ստորագրված է տպագրության 30.03.2007 թ. Տպագրանակը՝ 2000:
Տպագրվել է «Չանգակ-97» իրատարակչատանը:

Իրավական մշակույթ
Legal Culture
Правовая культура
Տարածվում է անվճար